

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 40/5

13 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ 18.09.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածների դրույթների կիրառման արդյունքում հաշվարկված պարտավորությունները վերանայելու վերաբերյալ:

«Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.

«Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն հանդիսանում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչ, իրականացնելով պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարումը: Իր գործունեությունը սկսել է ծավալել 2014 թ-ի մարտ ամսից և իր գործունեության մասով համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ կետի, ըստ որի բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, վճարահաշվարկային կազմակերպությունների (բացառապես նույն կետով նախատեսված վճարահաշվարկային ծառայությունների մասով) և վարկային կազմակերպությունների կողմից (բացառությամբ նույն կետով սահմանված դեպքերի) իրականացվող ներդրումային ֆոնդի կառավարումը, ներառյալ իր կողմից կառավարվող (այդ թվում՝ պատվիրակման արդյունքում) ներդրումային ֆոնդի թողարկած արժեթղթերի տեղաբաշխման և (կամ) հետզնման (մարման) արդյունքում ստացված վճարների մասով ազատված է ԱԱՀ-ից:

«Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն սկսած իր գործունեության օրվանից մինչ 2015 թ-ի հունիս ամիսը ներկայացրել է ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ, սակայն 24.08.2015 թ-ին հարկային մարմնի կողմից ստացված տեղեկացումից պարզվել է, որ 2014 թ-ին (նախորդ օրացուցային տարի) կազմակերպության կողմից իրականացված գործարքներից առաջացած հասույթը (առանց ԱԱՀ-ի) գերազանցել է 100 միլիոն դրամը, որն առաջաջացել է 2015 թ-ի ապրիլ ամսին 2014 թ-ի ԱԱՀ-ի հաշվարկներում ճշգրտում կատարելուց հետո:

Ըստ տեղեկացման «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը, ըստ որի՝ ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր եռամսյակը՝ բացառությամբ այն անձանց համար, որոնց՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված գործարքներից հասույթը (առանց ԱԱՀ-ի) նախորդ օրացուցային տարում գերազանցել է 100 միլիոն դրամը, ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիս:

Այսպիսով տեղի է ունեցել վրիպակ՝ 2015 թ-ին ամսական ԱԱՀ հաշվարկների փոխարեն ներկայացվել են եռամսյակային հաշվարկներ, ինչը հայտնաբերվելուց հետո անմիջապես այն վերացվել է 2015 թ-ի համար ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացնելու միջոցով, որի մասին 09.09.2015 թ-ին գրավոր տեղեկացվել է հարկային տեսչությանը:

2015 թ-ի սեպտեմբերի 17-ին «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն Կենտրոնի ՀՏ-ից ստացել է 17.09.2015 թ-ի դրությամբ հարկային պարտավորությունների մնացորդների վերաբերյալ տեղեկանք, որում հաշվեգրված մնացորդային տույժը և տուգանքը կազմում է 317.131 դրամ:

Քանի որ «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն կատարել է ԱԱՀ-ի իր մասով վճարման պարտավորությունները և հաշվի առնելով կազմակերպության պարտաճանաչ և ժամանակին հարկեր վճարելու հանգամանքը, ինչպես նաև ընթացիկ ֆինանսական վիճակը, գանգատաբերը խնդրում է չձանրաբեռնել լրացուցիչ պարտավորություններով և անձնական քարտի հաշվում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հանելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման արդյունքում հաշվառված պարտավորությունը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) 2014 թ-ին հանդիսացել է ԱԱՀ վճարող և ներկայացրել է ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014 թ-ին իրականացված գործարքներից առաջացած հասույթը (առանց ԱԱՀ-ի) գերազանցել է 100 միլիոն դրամը, 2015 թ-ից ընկերությունը ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկների փոխարեն պետք է ներկայացներ ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ: Սակայն, ընկերությունը 2015 թ-ին շարունակել է ներկայացնել ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ: Արդյունքում Կենտրոնի ՀՏ կողմից ընկերության նկատմամբ հաշվարկվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի և «Ամունդի» ֆրանսիական կազմակերպության միջև 2015 թ-ի ապրիլի 17-ին կնքվել է Հաճախորդների ուղղորդման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն «Ամունդի» ֆրանսիական կազմակերպությունը ստանձնել է ՀՀ իրավաբանական և ֆիզիկական անձանց ֆոնդերի կառավարչի ծառայություններ մատուցելու պարտականություն: Պայմանագրով նախատեսվել է, որ հաճախորդների ուղղորդման աշխատանքները կատարելու է ընկերությունը, որի դիմաց նախատեսված է համապատասխան վճար: Պայմանագրով սահմանվել է նաև, որ դրանով նախատեսված դրույթները գործում են 2014 թ-ի հունվարից:

Պայմանագրի շրջանակներում ստացված հասույթների գնահատման արդյունքում ընկերությունը պարզել է, որ 2014 թ-ի արդյունքներով ընկերության իրացումից հասույթը գերազանցել է 100 միլիոն դրամը և կատարել է դրանից բխող համապատասխան ճշգրտումներ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով հստակ սահմանված է, որ. «Այն անձանց համար, որոնց՝ սույն օրենքի 6 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված գործարքներից հասույթը (առանց ԱԱՀ-ի) նախորդող օրացուցային տարում

գերազանցել է 100 միլիոն դրամը, ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը»:

Այսինքն, ընկերության 2014 թ-ի իրացումից հասույթը 100 միլիոն դրամը գերազանցելու պայմաններում 2015 թ-ի հունվարի 1-ից ընկերության համար ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջանը համարվում է յուրաքանչյուր ամիսը:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով որոշում կայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ընկերության 2014 թ-ի իրացումից հասույթը 100 միլիոն դրամը գերազանցելը պայմանավորված է եղել բացառապես Պայմանագրի կնքմամբ: Այսինքն, 2014 թ-ի իրացումից հասույթը 100 միլիոն դրամը գերազանցելու, հետևապես նաև 2015 թ-ի հունվարի 1-ից ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջանը յուրաքանչյուր ամիսը համարվելու մասին ընկերությանը հայտնի է դարձել միայն պայմանագրի կնքումից հետո, այն է՝ 2015 թ-ի ապրիլ ամսին: Այսինքն, ըստ էության, բացակայում է ընկերության մեղքը 2015 թ-ի հունվար, փետրվար և մարտ ամիսներին ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ չներկայացնելու հարցում: Հետևապես, Հանձնաժողովը գտնում է, որ ԱԱՀ-ի ամսական հաշվարկների փոխարեն եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու համար Կենտրոնի ՀՏ կողմից լրացուցիչ հաշվարկված պարտավորությունները ենթակա են նվազեցման մինչև Պայմանագրի կնքումն ընկած ժամանակահատվածի (հունվար-մարտ) համար հաշվարկված պարտավորությունների չափով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ-ին.

«Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի անձնական հաշվի քարտից նվազեցնել 2015 թ-ի հունվար, փետրվար և մարտ ամիսներին ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ չներկայացվելու համար լրացուցիչ հաշվարկված պարտավորությունները:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ